

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆՆԵՐՈՒ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԷԼԵՄԵՆՏԱՐԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ ժողովրդի անցյալի պատմության ուսումնասիրման համար ուրույն արժեք ունի Մ. Այրիվանեցու «Պատմութիւն ժամանակագրական» երկը: Այն միաժամանակ օգտակար տեղեկություններ է պարունակում Հայաստանի հարևան և նրա հետ առնչված պետությունների պատմության մասին: Դա է պատճառը, որ պատմական այդ երկասիրությունը դեռևս XIX դ. կեսերից գրավել է մի շարք հայագետների ուշադրությունը: Ուսումնասիրություններ են կատարվել Մ. Այրիվանեցու օգտագործած սկզբնաղբյուրների ճշտման ու գնահատման, աշխատության ավարտի թվականի որոշման, բովանդակության հետ կապված առանձին հարցերի պարզաբանման ուղղությամբ: Քննարկման նյութ է դարձել հատկապես երկի ամբողջության հարցը, որին և կանդաղառնանք ստորև:

«Պատմութիւն ժամանակագրական» աշխատության հեղինակման տեղի և թվականի մասին որոշակի տեղեկություններ չկան: Այրիվանեցի՝ Մ. Այրիվանեցու վիմափոք քարայրի արձանագրությունից հայտնի է, որ նա 1289 թ. հիմնել է իր առանձնարան-քարայրը՝ իբրև աշխատելու և աղոթելու վայր՝: Այդ թվականը նույնանալով ժամանակագրության թվական վերջին տվյալի (1289) հետ, հիմք է տալիս ասելու, որ Մ. Այրիվանեցին այս աշխատությունը գրել է Այրիվանքի հիշյալ վիմափոք քարայրում:

Սակայն աշխատության ավարտի թվականի շուրջը՝ շաղկապված նրա ամբողջության հարցի հետ, կան տարակարծություններ: Դրա հիմնական պատճառն այն է, որ թեև աշխատության բուն տեքստն ավարտվում է XIII դ. 80-ական թվականների իրադարձությունների հիշատակմամբ, ավելի ճշգրիտ՝ «ԶԼԸ» (1289) թվականով, նրա առաջին մասում տեղադրված պատմական անձանց անվանական ցուցակներում հիշատակված են նաև XIV դ. սկզբներին գործող անձնավորություններ: Հայագետ Մ. Բրոսսեն, առաջինը նկատելով այս հակասությունը, առաջ է քաշել աշխատության ժամանակաշրջանի հարցը: Նա առաջնորդվելով ժամանակագրությունում առկա տոմարական մի աղյուսակով, որի հաշվարկը հանգեցնում է 1297—1300 թթ., եզրակացրել է, թե աշխատությունը դրվել է այդ տարիներին²:

Դրան հակառակ, որոշ բանասերներ (Գ. Գալեմբյարյան³, Բ. Պատկան-

1 Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, նորագույն արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 3:

2 «Histoire chronologique par Mkhitar d'Ailivank, XIIIe siècle», par M. Brosset, St. Pétersbourg, 1869, II—III, էջ 72:

3 Գ. Գալեմբյարյան, Մխիթար Այրիվանեցի և յուր նորագույն գրությունը («Հանդես Ամսորյա», 1891, № 6, էջ 186),

յան⁴, Բ. Սարգիսյան⁵, Գ. Հովսեփյան⁶ և այլն) աշխատությունում 1289 թ. հետո եղած նշումները դիտելով իբրև օտար հավելումներ՝ այն համարում են ավարտված այդ թվականով։ Բանասերների մեկ այլ խումբ (Ղ. Ալիշան⁷, Հ. Մանանդյան⁸, Ի. Աբուլաձե⁹ և այլն), առաջնորդվելով աշխատության ցուցակներում եղած վերջին տվյալներով, նրա ժամանակաշրջանը հասցնում են մինչև 1304—1306 թթ.։ Մեր որոնումները երևան բերեցին նոր փաստեր, որոնք հնարավորություն են ընձեռում հանգելու ավելի որոշակի եզրակացության։ Անդրադառնանք այդ փաստերին։

Օտար հավելումների մասին կասկած է հարուցել աշխատության առաջին գլխում տեղադրված «Կաթողիկոսը Հայոց» ցուցակը։ Այն պարունակում է Ստեփաննոս Հռոմկլայեցի և Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսների անունները, որոնց ժամանակաշրջանը բուն շարադրանքում չի ներկայացված։

Քննության ենթարկելով ժամանակագրությունը բովանդակող ձեռագրերը, հնարավոր եղավ պարզել, որ «Կաթողիկոսը Հայոց» ցուցակի վերջին մասը հետագա հարյուրամյակներում կատարված ընդօրինակությունների ժամանակ ենթարկվել է որոշ աղավաղումների։ Ավելի հստակ պատկերացնելու համար ստորև ներկայացնում ենք ցուցակի համապատասխան հատվածը՝ Մատենադարանի տարբեր խմբագրության ձեռագրերում։

Ձեռագրերի բաղդատումը ցույց է տալիս, որ բերված հատվածներում աղավաղված են հատկապես վերջին կաթողիկոսների տարեթվերը և նրանց ընդհանուր թիվը ցույց տվող նախադասությունը։ Այսպես, առաջին խմբագրության ձեռագրերում կաթողիկոսների համար նշված տարեթվերից սկզբինը կապվում է Կոստանդին Կատուկեցու անվան հետ, իբրև «73-րդ կաթողիկոսի» գահակալման տարեթիվ՝ «ՁԼԶ» (1287)։ Այն ճշգրտված տվյալների հետ մեկ տարվա տարբերություն է տալիս, քանի որ Կոստանդին Կատուկեցին կաթողիկոս է հաստատվել 1286 թ.։ Այս տարեթիվը պակասում է երկրորդ խմբագրության ձեռագրերից, ուր ի տարբերություն առաջինների, նշված է միայն նրա կաթողիկոսության տարիների քանակը՝ «Գ» (3)։

Առաջին խմբագրության ձեռագրերում Կոստանդին Կատուկեցու հաջորդ՝ Ստեփաննոս Հռոմկլայեցու անվան դիմաց նույնպես նշված է թվական՝ «ՁԼԹ» (1290)։ Հիշատակված է նաև նրա իշխանության երկու տարին և գերեվարությունը։

Այլ սյուսկեր է, սակայն, երկրորդ խմբագրության ձեռագրերում։ Նրանցից մեկում (Ձ 3070) Ստեփաննոս Հռոմկլայեցու անվան դիմաց տարեթիվ չի նշված։ Սխալմամբ հիշատակված է «ՁԼԸ» (1289) թվականը, իբրև 73-րդ կաթողիկոսի տարեթիվ։ Նույն խմբագրության Ձ 9178 ձեռագրում որպես

⁴ «Хронографическая история, составленная отцом Мхитаром, вардапетом Айри-ванским» («Труды восточного отделения императорского русского археологического общества», ч. XIV, СПб., 1869, էջ 316)։

⁵ Բ. Սարգիսյան, Ցուցակ ձեռագրաց ի վեներիկ, հ. Բ, վեներիկ, 1924, էջ 302—303։

⁶ Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 14—15։

⁷ Ղ. Ալիշան, Հայապատում, վեներիկ, 1901, էջ 115—116։

⁸ Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 428։

⁹ «Քարթլիս Ցխովրեբայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը» լույս ընծայեց Ի. Աբուլաձեն, Թբիլիսի, 1953, էջ 024։

Ա խ մ բ ա գ բ ու թ յ ու ն		Բ խ մ բ ա գ բ ու թ յ ու ն	
№ 582	№ 6520	№ 3070	№ 9178
Տէր Յակոբ ԺԹ Տէր Կոստանդին ՀԳ կաթողիկոս նստի ՉԼԶ թվին. ՉԼԹ թվին տէր Ստեփաննոս Բ ամ. առ սովաւ մարցին էառ զՀռոմկլայն և զսայ գերի տարաւ: Տէր Գրիգոր Անաւարզեցի, ՉԼԸ թվին¹⁰,	Տէր Յակոբ ԺԹ Տէր Կոստանդին ՀԳ-երրորդ կաթողիկոս նստի 'ի ՉԼԶ թուին. իսկ 'ի ՉԼԹ թուին տէր Ստեփան' Բ ամ. առ սովաւ մար- ցին էառ զՀռոմկլայն և զսա գերի տա- րաւ Տէր Գրիգոր Անաւարզեցին նստաւ' ի ՉեԱ (1293) թուին¹¹:	Տէր Յակոբ ԺԹ Տէր Կոստանդին Գ Տէր Ստեփաննոս Բ ՀԳ կաթողիկոս նստաւ ՉԼԸ թվին: Առ սովաւ մարցին էառ զՀռոմ- կլայն և զսա գերի տարաւ: Տէր Գէորգ Անաւարզեցին ԺԳ. ՉԼԸ: Տէր Կոստանդին ԺԳ. Տէր Կոստանդին Գ. Տէր Յակոբ Անաւարզեցի ՉԶԷ ա- մին¹²:	Տէր Յակոբ գիտնական ԺԹ Տէր Կոստանդին Պրոնազործն Գ. Տէր Ստեփաննոս Հռոմկլայեցին: Առ սո- վաւ մարցին էառ զՀռոմկլայն և զոս- գերի տարաւ. ՉԼԸ թվին: Տէր Գրիգոր Անաւարզեցին Տէր Կոստանդին Կեսարացին Տէր Կոստանդին Լամբրոնացին Տէր Յակոբ Սըսեցին ՉԶԷ թվին¹³:

¹⁰ Մատենադարան, ձեռ. № 582, Թ. 11ա: Ձեռագրում «նստի» բառի փոխարեն գրված է «նստին»:

¹¹ Մատենադարան, ձեռ. № 6520, Թ. 33ա: Տես՝ «Մ խ ի թ ա ր ա յ Ա յ ը ի վ ա ն ե ց ո յ Պատմութիւն Հայոց», Մ., 1860, էջ 17:

¹² Մատենադարան, ձեռ. № 3070, Թ. 359ա—360բ: Անավարզեցու անունը աղավաղված է գրչի կողմից. պետք է լինի Գրիգոր, Սա Ղ. Ալիշանի տեսած ալն ձեռագրի նախօրինակն է, ուր հիշյալ ցուցակում հետագայում ավելացված են ևս երկու կաթողիկոսների անուններ:

¹³ Մատենադարան, ձեռ. № 9178, Թ. 3ա: Ձեռագիրը ընդօրինակված է իրրե Գավազանագիրք, ըստ որի «Կաթողիկոս» Հայոց» ցուցակը ունի շարունակութուն մինչև ՌՃԿ թիվը: Ձեռագրում Հռոմկլայեցու փոխարեն գրված է Հռոմայեցին:

Հռոմկալի գրավման և կաթողիկոսի գերեզմանության տարեթիվ. դարձյալ սխալ, նշված է նույն «ՉԼԸ» (1289) թվականը:

Հիշյալ ցուցակում տարբեր տարեթվեր են նշված նաև Գրիգոր Անավար-վեցու անվան դիմաց, որը կաթողիկոսական աթոռին է հաստատվել Հռոմ-կլայեցու մահից հետո՝ 1293 թ.: Այսպես, առաջին խմբագրության ձևագրե-րից մեկում (№ 582) Գրիգոր Անավարդեցու կաթողիկոս դառնալու տարեթիվը նշված է 1289, այն դեպքում, երբ նրա նախորդ Ստեփաննոս Հռոմկլայեցին հիշատակված է 1290 թ.: Այդ խմբագրության մեկ այլ (№ 6520) ձևագրում Գրիգոր Անավարդեցու անվան դիմաց նշված տարեթիվն է ԶԽԱ (1292):

Երկրորդ խմբագրության ձևագրերից մեկում (№ 3070) Գրիգոր Անա-վարդեցու կաթողիկոսության տարիների ճիշտ նշումի հետ միասին («ԺԳ»՝ 13 տարի), իբրև կաթողիկոս դառնալու տարեթիվ, առաջին խմբագրության № 582 ձևագրի օրինակով, հիշատակված է դարձյալ նույն թվականը՝ «ՉԼԸ» (1289):

Այսպիսով, պարզ է դառնում, որ առաջին խմբագրության ձևագրերում տրված են Գրիգոր Անավարդեցու նախորդ երկու կաթողիկոսների տարեթվե-րը՝ «ՉԼԸ» (1287) և «ՉԼԹ» (1290), որոնք չկան երկրորդ խմբագրության ձև-ագրերում: Այս, և՛ առաջին, և՛ երկրորդ խմբագրության ձևագրերում աղա-վադված է Գրիգոր Անավարդեցու կաթողիկոս դառնալու տարեթիվը:

Ժամանակագրությունում տեղադրված ցուցակների մեծ մասի նման, «Կաթողիկոսք Հայոցը» ևս ունի ցուցակն ամփոփող նախադասություն, որի տեղը մեր բերած օրինակներում խախտված է:

Առաջին խմբագրության ձևագրերում այն բերված է Կոստանդին Կա-տուկեցու կաթողիկոսության նշումից հետո. «Տէր Կոստանդին, ՉԳ կաթողի-կոս նստին ՉԼԸ (1290) թվին»: Լրիվ տարբեր պատկեր է ներկայացնում երկ-րորդ խմբագրության ձևագրերից № 3070-ը: Այստեղ Ստեփաննոս Հռոմկլա-յեցու իշխանության տարիների թվից հետո, իբրև ցուցակն ամփոփող նախա-դասություն, գրված է. «ՉԳ կաթողիկոս նստան ՉԼԸ (1287) թվին», որից հետո, սակայն շարունակվում են Հռոմկլայի և Ստեփաննոս Հռոմկլայեցու մասին տեղեկությունները: Ինչպես տեսնում ենք, ցուցակն ամփոփող նախադասու-թյունը տեղաշարժված է, իսկ ե՞տ, թե առաջ, պարզվում է միայն ցուցակում առկա կաթողիկոսների ընդհանուր թիվը՝ ճշտելուց հետո: Անհրաժեշտ է դառ-նում պարզել, թե արդյո՞ք Կոստանդին Կատուկեցին և կամ Ստեփաննոս Հռոմ-կլայեցին 73-րդ կաթողիկոսն են եղել Հայաստանում:

«Կաթողիկոսք Հայոց» ցուցակը նույնատիպ այլ ցուցակների հետ համե-մատելով նկատում ենք, որ Մ. Այրիվանեցու կազմած ցուցակը շատ է մոտե-նում Մ. Անեցու համանուն ցուցակին: Վերջինս հետագայի լրացումով նույնպես ավարտվում է Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսով: Շարունակողը ժամանակակից է եղել Գրիգոր Անավարդեցուն, քանի որ գրում է. «Սև այժմ է տէր Գրիգոր, Անաւարդայ Եպիսկոպոսն»¹⁴: Մ. Այրիվանեցու և Մ. Անեցու ցուցակները նույնանում են ինչպես անուններով, գահակալման տարիների նշումներով, այնպես և ընդգրկված կաթողիկոսների թվով: Պարզվում է, որ Մ. Այրիվանեցու ցուցակն ամբողջական է: Գրչի վրիպումով պակասում է միայն Տրդատ Ոթմսեցու անունը, որը նկատի է առնված կաթողիկոսների

¹⁴ «Մխիթարայ Անեցու Պատմութիւն», Ս. Պետերբուրգ, 1879, էջ 10—11:

ընդհանուր թվի մեջ՝ Ե՛վ Մ. Այրիվանեցու, և՛ Մ. Անեցու ցուցակներում պահասում են Մելիտե Մանազկերտացու և Մովսես Մանազկերտացու անունները, որոնց կապակցությամբ Մ. Օրմանյանը գրում է. «Ազգային պատմիչներ Հովհաննես կաթողիկոսն սկսելով և կաթողիկոսներու գավազանագիրք կազմողներ ընդհանուր կերպով ցուցակի չեն անցներ Մելիտեն և անոր հաջորդող Մովսեսը, և Հովսեփ Հողոցմեցիին ետքը Գյուտ Արահեզացիին կանցնեն, իբր թե անմիջապես իրարու հաջորդած ըլլային»¹⁵։

Մ. Անեցու ցուցակում չի նշված և ոչ մի տարեթիվ, ինչպիսին և ենթադրում ենք, որ եղել է Մ. Այրիվանեցու սկզբնադրում (նկատի չունենք «ԶԼԸ» թվականը)։ Մ. Անեցու մոտ, ի տարբերություն Մ. Այրիվանեցու, չկա միայն վերջին ամփոփող նախադասությունը, որը հատուկ չէ նրա կազմած ցուցակներին։ Ցուցակների զուգորդումից ակնհայտ է դառնում, որ Մ. Այրիվանեցին իր ցուցակը կազմելիս օգտվել է Մ. Անեցու վերոնշյալ ցուցակից։

Երկու ցուցակների համեմատությունը երևան է բերում բանասերների ուշադրությունից վրիպած մի կարևոր պարագա։ Պարզվում է, որ ինչպես Մ. Այրիվանեցու, այնպես և Մ. Անեցու ցուցակում, Կոստանդին Կատուկեցին ոչ թե 73-րդ, այլ 70-րդ կաթողիկոսն է։ Հետևապես, ցուցակն ամփոփող թվի՝ «73»-ի մեջ մտնում են Կոստանդին Կատուկեցու հաջորդներ Ստեփաննոս Հռոմկլայեցին, Գրիգոր Անավարզեցին, ինչպես նաև վերջինիս հաջորդ Կոստանդին Կեսարացին, որի անունը չի հիշատակված ցուցակում (նա կաթողիկոսական աթոռին է հաստատվել 1307 թ.)։ Այստեղից հայտնի է դառնում նաև, որ 73-րդ կաթողիկոսն իշխանության գլուխ է անցել ոչ թե 1287, կամ 1289 թթ., այլ 1307 թ.։

Ուշագրավ է, որ Մ. Այրիվանեցու ցուցակն ամբողջությամբ վերցրած մինչև հիշյալ հատվածը, աշխատությունում տեղ գտած 30-ից ավելի այլ ցուցակների նման, չունի տարեթվային որևէ նշում։ Այս առումով Ժամանակագրության սկզբնագրին ավելի մոտ է № 3070 ձեռագրի վերոքննյալ ցուցակը։ Նրանում բոլոր կաթողիկոսների համար կան նշումներ նրանց իշխանության տարիների վերաբերյալ, իսկ եղած միակ տարեթիվը՝ «ԶԼԸ»-ն (1289) է, որը նշված ձեռագրերից ոչ մեկում չի կապվում համապատասխան անձի կամ իրադարձության հետ։ «ԶԼԸ» (1289) տարեթիվն իր հերթին կարևորություն է ստանում նրանով, որ շնայած անհարկի, սակայն օգտագործված է նաև մյուս երկու խմբագրության ձեռագրերում։ Դա թույլ է տալիս ասելու, թե Մ. Այրիվանեցու սկզբնադրում «Կաթողիկոսք Հայոց» ցուցակի վերջում եղել է ինչ-որ հիշատակություն՝ կապված «ԶԼԸ» թվականի հետ։ Նկատի առնելով, որ Կոստանդին Կատուկեցին իշխել է մինչև 1289 թ., կարծում ենք, այն նշված է որպես 70-րդ կաթողիկոսի աթոռակալության վերջի տարեթիվ։ Ըստ այդմ, ճշտվում է և ամփոփող նախադասության տեղը։ Ցուցակն ավարտվում է Կոստանդին Կատուկեցի կաթողիկոսի անվան և իշխանության տարիների թվի նշումով, որին հաջորդում է ցուցակն ամփոփող նախադասությունը։ Առաջնորդվելով այս ճշգրտումներով, հնարավոր է դառնում պայմանականորեն ուղղում մտցնել ցուցակի այդ հատվածում։ Ըստ այդմ սկզբնադրում այն ունեցել է հետևյալ մոտավոր պատկերը.

¹⁵ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 1, Կ. Պոլիս, 1912, էջ 410։

Տէր Յակոբ ԺԹ

Տէր Կոստանդին Գ

Հ. կաթողիկոս նստաւ ԶԼԸ թվին,

Դրանից հետո դրված վերջին երկու կաթողիկոսների անունները (Ստեփաննոս Հռոմկլայեցի, Գրիգոր Անավարզեցի) սկստր է դիտել 1289 թ. հետո արված հավելում:

Նման հավելում ունի նաև «Թագաւորք Վրաց» ցուցակը: Այստեղ վրաց իշխանների և թագավորների ընդհանուր թիվը ներկայացնող նախադասութիւնից հետո գրված են ևս երկու թագավորների անուններ (Դավիթ, Վախթանգ), որոնք ցուցակը հասցնում են մինչև 1307 թ.: Այդ անունները, սակայն, չեն ընդգրկված ընդհանուր թվի մեջ: Այն ունի հետևյալ պատկերը.

Դեմետրէ սպանեալ
ՀԹ իշխանք և թագաւորք
Դաւիթ
Վախթանգ¹⁶:

Ուշագրավ է նաև, որ այստեղ ամփոփող նախադասութիւնը հաջորդում է Դեմետրեի սպանութեան մասին եղած տեղեկութեանը՝ կատարված 1289 թ.: Ուստի, անկասկած է դառնում, որ այս ցուցակը ևս ավարտվել է նույն այն թվականով, ինչ որ «Կաթողիկոսք Հայոց» ցուցակը և որ երկու ցուցակների հավելումը կատարել է միևնույն անձնավորութիւնը:

Օտար հավելումների վերաբերյալ կասկած հարուցող տվյալ է բովանդակում «Իշխանք Կիլիկեցւոց» ցուցակը: Այն վերջանում է «Հեթում ԺԵ» նշումով, որ մատնանշելով Հեթում II-ի իշխանութեան լրիվ տարիները, ցուցակը հասցնում է մինչև 1304—1306 թթ. (ինչպես նկատել է Գ. Հովսեփյանը, ըստ սկզբնաղբի Հեթում II-ի գահակալման տարիների նշումը, հավանաբար, եղել է «ԺԵ», որը նրա իշխանութեան լրիվ տարիներն է մատնանշում): «ԺԵ» նշումը Գ. Հովսեփյանը դիտել է իբրև օտար հավելում, որովհետև ժամանակագրութեան վերջին թվականից (1289) մինչև Հեթում II-ի գահակալման վերջնական տարեթիվը համար աշխատութիւնում ոչինչ չի նշված¹⁷:

Ցուցակը, սակայն, ինքնին օտար միջամտութեան վերաբերյալ որևէ տարակուսանք չի առաջացնում: Ընդհակառակն, հենց «Իշխանք Կիլիկեցւոց» ցուցակով է ամփոփվում հայ իշխանների և թագավորների դինաստիաներին համապատասխան կազմած հինգ անվանական ցանկերի ընդհանուր թիվը (129 մարդ), որի մեջ մտնում է և Հեթում II-ը: Բայց այս ցուցակը համեմատելով վերոքննյալ երկու ցուցակների հետ, որոնք ամփոփվում են այդ նույն թվականին կատարված իրադարձութեան հիշատակմամբ, նաև նկատի ունենալով, որ նույն Հեթում II-ի իշխանութեան գլուխ անցնելու տարեթիվը՝ 1289, ժամանակագրութեան ավարտվում է, ցուցակին հարադատ կարող ենք դիտել միայն Հեթում II-ի անվան հիշատակութիւնը՝ կապված նրա իշխանութեան գլուխն անցնելու տարվա (1289 թ.) հետ:

Այսպիսով, ի մի բերելով կատարված քննութիւնը, եզրակացնում ենք,

¹⁶ Մատենադարան, ձև. № 582, թ. 11 բ.

¹⁷ Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 15:

որ ժամանակագրության առաջին մասը, որի մեջ մտնում են նշված երեք ցուցակները, ավարտվում է 1289 թ. հիշատակությամբ:

Առաջադրված հարցի առնչությամբ ուսումնասիրվել է և ժամանակագրության բուն բնագիրը: Ինչպես նշվեց, այստեղ թվական վերջին տվյալը Հեթում II-ի գահակալման տարեթիվն է՝ 1289, որին հաջորդում է տեղեկություն հացաթանկության վերաբերյալ:

«Մեռալ թագաւորն Լեոն և նստաւ Հեթում:

Իդէ սաստիկ հացաթանկութիւն մարդոյ և անասնոյ ջլլալ»¹⁸,

Դ. Հովսեփյանը, որը ժամանակագրության վերջին տարեթիվը ընդունում է 1289, ենթադրում է, որ հացաթանկության վերաբերյալ եղած տեղեկությունը համապատասխանում է Ս. Անեցու Պատմության շարունակողի հետևյալ նշումին. «ԹՅԱ. Ի Զեղ թվին եղև սով սաստիկ և մոթ ցորեանն ԲՃՄ դրամ»¹⁹: Այստեղից էլ բխում է այն ենթադրությունը, որ դա վերաբերելով 1301 թ., ավելացված է հետագայում²⁰:

Ձեռագիր հիշատակարանների քննությունը ցույց տվեց, որ իրոք, XIII դ. վերջերին և XIV դ. սկզբներին եղել է ուժեղ սով, որն ընդգրկել է ամբողջ երկիրը²¹:

Հիշատակարանային տեղեկությունները վերաբերում են ոչ միայն 1300 թ., այլև դրանից առաջ ընկած ժամանակաշրջանին, ուստի, անկասկած է, որ տնտեսական ծանր վիճակը և հացաթանկությունը սկսվել է ոչ միանգամից, այլ դեռևս XIII դ. վերջերից, իսկ ավելի է խորացել ու «սաստիկ սովի» վերածվել հետագայում: Հետևապես, ոչ մի հիմնավոր փաստ չունենք հացաթանկության վերաբերյալ եղած տեղեկության գրառումը դիտելու որպես ուրիշի կատարած հավելում:

Նշված օրինակներից բացի ժամանակագրության բնագրի ուսումնասիրությունը երևան հանեց բանասերների ուշադրության վրիպած «ԶԼԸ» (1289) թվականի օգտագործման և՛ մեկ օրինակ: Պարզվեց, որ աշխատության երկրորդ մասը ՁԸ 582, 1723 ձեռագրերում և նրանից կատարված ընդօրինակություններում վերջանում է Ադամից մինչև Քրիստոսի ծնունդն ընկած ժամանակաշրջանում հայտնի 6 նշանավոր իրադարձությունների հիշատակմամբ, վերջում, իբրև ամփոփում ունենալով նաև «ԶԼԸ» թվականի վերաբերյալ նշում:

Դա, ինչպես ստորև կտեսնենք, վերաբերում է հեղինակի ժամանակաշրջանին և մատնանշում է աշխատության հեղինակման տարին: Այսպես. «ՅԱդամայ ի ջրհեղեղն ամք ՍՄԽԲ (2242), Անդի յաշտարակն ամք ՇԻԵ (525), Անդի յԱբրահամ նժէ (417), Անդի յԵլսն Իսրայելի յնգիպտոսէ ՇԵ (505), Անդի ի Սողոմոնի շինած տաճարին նՁ (480), Անդի ի Զաւրաբաբելի շինած տաճարին ՇԺԱ (511), Անդի ի ծնունդն Քրիստոսի աստուծոյ մերոյ ՇԺԸ (518),

¹⁸ Մատենադարան, ձեռ. Ձ 582, Թ. 44 ր:

¹⁹ «Ս մ ու է լ ի քահանայի Ա ն ե ց ո յ Հ աւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 155: Գրքում հավանաբար տպագրական սխալի հետևանքով ՌՅԱ տարեթիվի փոխարեն գրված է ՈՅԱ:

²⁰ Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 14,

²¹ Մատենադարան, ձեռ. Ձ 2583, Թ. 178 ա, 181 բ, ձեռ. Ձ 2817, Թ. 200 բ—201 ա:

Միանգամայն ՐՃՂԸ (5198), Թուին ԶԼԸ (738), Ի ծննդենէն Քրիստոսի և հայ թիվ ՇԾԳ (553)²²։

Ժամանակագրութեան տսյադիր օրինակներում «ԶԼԸ» թվականի նշումը հիմնականում դուրս է մնացել բնագրից։ Չնայած այն առկա է Մ. էմինի ընդօրինակած ձեռագրում, սակայն տեղ չի գտել նրա մոսկովյան հրատարակությունում²³, որը կատարված է Մ. Սալլսթյանցի ընդօրինակության հիման վրա²⁴, Ք. Պատկանյանն առաջնորդվելով մոսկովյան հրատարակությունով, իր հայերեն տպագրությունում հիշյալ նախադասությունը բերել է իբրև տարրնթերցված «Ք» ձեռագրի (Լենինգրադ, С—13), իսկ ուսերեն թարգմանությունում չի նշել ընդհանրապես²⁵, «ԶԼԸ» նշումը չկա նաև Մ. Բրոսսեի ֆրանսերեն թարգմանությունում²⁶, Հավանաբար, այս է պատճառը, որ այդ թվականը չի մտել գիտական շրջանառության մեջ։ Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, աշխատությունում պահպանված է ուղղակի տեղեկություն՝ նրա հեղինակման թվականի վերաբերյալ։

Այսպիսով, աշխատության ընդհանուր քննությունից երևան է դալիս այն փաստը, որ «Պատմութիւն ժամանակագրականի» երեք մասերից յուրաքանչյուրը վերջանում է 1289 թ.։ Հետևաբար, աշխատությունը գրվել և ավարտվել է այդ թվականին, իսկ նրանից հետո եղած տեղեկություններն ավելացվել են հետագայում։

Ձեռագրական նորահայտ մի տեղեկության համաձայն Մ. Այրիվանեցու ժամանակագրությունը ունեցել է շարունակություն նաև մինչև 1311 թ.։ Այդ տեղեկությունը պահպանված է Մատենադարանի երկու ձեռագրերում՝ № 2271 (թ. 213 ա—214 ա), № 2220 (թ. 291 բ—293 ա) առկա «Ցանկ պատմադրաց»-ում, ուր ասվում է. «Մխիթար Այրիվանեցի, Համառօտ գաւազանաւ մինչև ի էՃԿ (760) թիւն»²⁷։ Ցուցակը պարունակող ձեռագրերն ընդօրինակված են միմյանցից։ Ընդ որում, № 2220-ը հանդիսանում է № 2271-ի ընդօրինակությունը, իսկ վերջինս էլ նախագաղափար օրինակ է ունեցել 1696 թ. ընդօրինակված մեղ անհայտ ձեռագրի։ Ուշագրավ է, որ Մ. Այրիվանեցու աշխատության հայտնի բնագրերից և ոչ մեկը չի ավարտվում «էՃԿ» թվականով, Հետևապես, Մ. Այրիվանեցու ժամանակագրության բնագրի այն օրինակը, որի հիման վրա անանուն հեղինակը կազմել է իր ցուցակը, անհայտ է։ Խոսելով Մ. Այրիվանեցու աշխատության ժամանակաշրջանի մասին, անհրաժեշտ է նաև անդրադառնալ նրանում առկա տոմարական այն հաշվարկին, որը ինչպես ասացինք, ըստ Մ. Բրոսսեի. հանգեցնում է 1297—1300 թթ.։

Ժամանակագրությունում տոմարական աղյուսակը հաջորդում է Աթանաս Տարոնացու կողմից Հայոց Մեծ թվականի ստեղծման մասին եղած տեղեկությանը և շարժական տոմարով ներկայացնում է հայ եկեղեցական տոները։

²² Մատենադարան, ձեռ. № 582, թ. 27 բ։

²³ «Մխիթարայ Այրիվանեցու Պատմութիւն հայոց», հրատ. Մ. էմինի, № 1860, էջ 42։ Մատենադարան, ձեռ. 6416, թ. 90 բ։

²⁴ Մատենադարան, ձեռ. № 6520, թ. 90 բ։

²⁵ «Մխիթարայ Այրիվանեցու Պատմութիւն ժամանակագրական», հրատ. Ք. Պատկանյանի, Մ. Պետերբուրգ, 1867, էջ 57։

²⁶ M. Brosset, նշվ. աշխ., էջ 57։

²⁷ Զ. Մ. Անասյան, Հայկական մատենագրություն, հ. Ա, Երևան, 1959, էջ LIII—LIV։

Նրանում տարբերվել չի նշված, սակայն ուշագիշտ քննությունը ցույց է տալիս, որ ինչպես նկատել է Մ. Բրոսսեն, այս աղյուսակը կազմված է մի տարվա համար. «Երբ ջրօրհնները ընկնում է նավասարդ ամսին, այդպիսի տարի է եղել 1297 թ. և նրան հաջորդող երեք տարիները, երբ նավասարդի 1-ը համընկել է հունվարի 6-ին»²⁸։ Ավելի հստակ պատկերացնելու նպատակով բերենք համապատասխան հատվածը. «Կալ զՀայ Մեծ թուականս և բաժանեալ ընդ Դ. մի մասն նահանջ է, Կալ զնահանջ, տար մեհեկի ամսոյ, ուր սպառի՝ յայտնութիւն է, Կալ զյայտնութիւնն՝ Դ ի վերա ած՝ տեառնընդառաջ է ի հոռի, Ը ած՝ գարուն է ի սահմի, ԻՋ ած՝ աւետիս է ի սահմի և ի տրէ, Գ ած՝ անկաստեղ է ի տրէ, ԺԳ ած՝ ելաստեղ է ի քաղոց, Թ ած՝ ամառն է ի յարաց, Զ ած՝ աստուածածին է ի յարեգ, Զ ած՝ սուրբ խաչ է ի յահկի, Ժ ած՝ աշուն է ի յահկի, ԺԱ ած՝ յիսնակաց բարեկենդան է ի մարգաց, ԺԱ ած՝ ձմեռն է ի հրոտից, ԻԲ ած՝ յայտնութեան բարեկենդան է ի հրոտից և յաւելիսն, Ը ի վերա բարեկենդանին ած՝ ջրաւրհնք է. յաւելիսն և ի նաւասարդի»²⁹, Բերված հաշվարկի համաձայն՝ հրոտից ամսվա 11-ին ավելացված 22 օր՝ հայտնության բարեկենդանն է։ Նրա 19 օրը լրացնում է հրոտից ամիսը, իսկ մնացած 3 օրն անցնում է ավելյացին։ Այս ավելյացի երեք օրվան ավելացված ութ օր՝ ջրօրհնքն է։ Ութ օրից երկուսը գումարվելով ավելյացի երեք օրվան, լրացնում է այն, իսկ մնացած 6 օրը փոխանցվում է հաջորդ՝ նավասարդ ամսին։

Այս բացահայտելուց հետո, Հայոց Մեծ թվականի համար կազմված տոնացույցի միջոցով ակնհայտ է դառնում, որ ջրօրհնքը՝ հունվարի 6-ը, նավասարդ ամսվա մեջ եղել է միայն նրա առաջին օրը՝ 1297—1300 թթ.³⁰,

Կատարված ճշտումով երևան է գալիս հակասական մի պատկեր։ Պարզվում է, որ 1289 թ. ավարտված Ժամանակագրությունում առկա է 1297—1300 թթ. դրված տոմարական հատվածը։ Ինչպես զուգորդել այն վերոքննյալի հետ։ Ժամանակագրության բնագրի քննությունը լույս է սփռում նաև այս հարցի վրա։ Այն ցույց է տալիս, որ աշխատությունում նշված աղյուսակից բացի կան նաև տոմարական այլևայլ հատվածներ, որոնք չեն առնչվում Ժամանակագրության բովանդակությանը, հետևապես նրա բաղկացուցիչ մասը չեն։ Դրանցից են օրինակ, հիշյալ տոմարական հատվածին հաջորդող կենդանակերպի անունները՝ հայերեն և վրացերեն լեզուներով³¹, Ապա՝ հայ եկեղեցական տոների համար անշարժ տոմարով կազմած աղյուսակը, որը հաջորդում է Հովհաննես Սարկավազի կողմից անշարժ տոմարի ստեղծման մասին եղած տեղեկությանը³², Ըստ մեզ, դրանց թվին պետք է դասել նաև Ժամանակագրության վերջաբանից հետո տրված հինգհարյուրակի 13 շրջանները ներկայացնող տոմարական հատվածը³³, նշվածներից բացի, աշխատություն

²⁸ M. Brosset, նշվ. աշխ. էջ II—III.

²⁹ Մատենադարան, ձեռ. № 582, ք. 32 ր. Մ. Այրիվանեսյու հիշյալ հատվածը հրատարակված է միայն Մ. Բրոսսեի կողմից հայերեն և ֆրանսերեն լեզուներով (M. Brosset, նշվ. աշխ., էջ 72, 110).

³⁰ Բ. Թումանյան, Առանձն տոմարացույց, Երևան, 1965, էջ 21.

³¹ Մատենադարան, ձեռ. № 582, ք. 32 ր.

³² Նույն տեղում, ք. 39 ա.

³³ Նույն տեղում, ք. 44 ր. Ժամանակագրության XIX դ. ընդօրինակողների, հրատարակիչների և նրա հետ առնչված բանասերների ուշագրությունից վրիպել է «ՇԼԹ» կիսաշրջանին վերաբերող հատվածը՝ դրված աշխատության վերջաբանից հետո։ Այն պահանջված է Ժամա-

ունի այլ ընդմիջարկութիւններ, որոնք հարազատ չեն նրան (Արիստոտելի ծառը, «Կարգադրութիւն գրոց սրբոց...» ցուցակը և այլն)։ Այստեղ, սակայն, ուշագրավ է մեկ այլ հանգամանք։ Այգ ընդմիջարկութիւնները հեղինակված են հինգ իր՝ Մ. Այրիվանեցու կողմից և կազմում են նրա մեկ այլ ստեղծագործութեան, հավանաբար մեկնողական բնույթ ունեցող «Տոմարական տեսութեան» առանձին մասերը։

Նշված եզրակացութիւնների համար հիմք է № 582 ձեռագրում շարժական տոմարի համար կազմված աղյուսակի վերջում եղած հետևյալ նշումը. «Տեսութիւն ի տէր Մխիթար վարդապետէս»³⁴։ Նկատելի է, որ Մ. Այրիվանեցու հեղինակութեան մասին վկայակոչումները հատուկ չեն այս աշխատութեանը։ Մնում է ենթադրել, որ Մ. Այրիվանեցու մատենագրութեանը քաջածանոթ մեկը, որն առնչվել է ժամանակագրութեան հետ, նպատակահարմար է գտել աշխատութեանը միահյուսելու նրա այլևայլ ստեղծագործութիւններից քաղված կտորները։ Շնորհիվ դրա, այժմ «Պատմութիւն ժամանակագրականի» միջոցով հայտնի է դառնում, որ Մ. Այրիվանեցին իր կյանքի վերջին տարիներին՝ 1297—1300 թթ. հեղինակել է նաև տոմարական աշխատութիւն։

Ամփոփելով վերոնշյալը, հանգում ենք հետևյալ եզրակացութիւններին. ա. Մ. Այրիվանեցու «Պատմութիւն ժամանակագրական» աշխատութեան երեք գլուխները ավարտվում են 1289 թ. հիշատակութեամբ։ Այստեղից հետևում է, որ այն գրվել և ավարտվել է այդ թվականին։ Բ. Աշխատութեան առաջին գլխում տեղադրված «Կաթողիկոսք Հայոց», «Իշխանք Կիլիկիացոց» և «Իշխանք Վրաց» ցուցակները ունեն 1289 թ. հետո կատարված հավելումներ։ Գ. Աշխատութեան ավարտից հետո, նրան է միահյուսվել Մ. Այրիվանեցու 1297—1300 թթ. գրված մեկ այլ՝ «Տոմարական տեսութիւն» աշխատութեան տարբեր հատվածներ։

Նկագրութեան հնագույն բնագրերը պարունակող № 582, 1723 ձեռագրերում, որոնք նույնա-նում են միայն Մ. Այրիվանեցու աշխատութեան ընդօրինակութեամբ, երկու ձեռագրերում էլ նույնն է հիշյալ հատվածի գրութեան արտաքին ձևը, Այսպես, ձեռ. № 582-ում տոմարական հաշվարկից հետո, էջն ունի ազատ տեղ, որը հետագայում լրացվել է այլ ձեռագրով և նյութով։ Նրա հաջորդ երկու թերթերը կտրված հանված են։ Ձեռ. № 1723-ում այգ հատվածի շարունակութիւնը հանդիսացող երկու թերթերը պահպանված են մաքուր վիճակում։ Դա պարզ վկայութիւնն է այն բանի, որ նշված ձեռագրերի մայր օրինակում տեքստը թերի է եղել, որի համար և հետագայում լրացնելու նպատակով ազատ են թողել երկու մաքուր թերթեր։ Այս նկատառումներին ավելացնելով նաև այն, որ աշխատութիւնն ունի նման այլ ընդմիջարկութիւններ, կարող ենք եզրակացնել, որ «ՇԼԲ»-ին վերաբերող հատվածը կազմում է դրանցից մեկը և լրացնում է Մ. Այրիվանեցու իսկ հեղինակած տոմարական տեսութեանը։ Ահա այդ հատվածը. «ՇԼԲ ասն շրջան մի է։ Առաջին շրջանն՝ յնոպսայ Ղէ ամին լցաւ։ Երկրորդն՝ յԱրեղի ճԲ-ին լցաւ։ Երրորդն՝ ի Ղամեքայ ճԽԴ-ին։ Չորրորդն՝ ի Նոյի ՆՁԶ-ին, Հինգերորդն՝ յԵրեքայ ՂԳ-ին, վեցերորդն՝ ի Նաքովրայ լէ-անն։ Յաթներորդն՝ յԵղիպտոսի ՄԹ։ Ութերորդն՝ ի Դաւթայ իԱ։ Իններորդն՝ ի Բարեւացոց գերութեանն ի ԽԹ։ Տասնն ի Կղաւղիա կայսեր Բ-ն։ ԺԱ Յուսէփիանոսի է։ ԺԲ ի Շեթ թվին հայոց։ ԺԳ ի Ռձն թվին» (Ձեռ. № 582, Թ. 44 ր)։

³⁴ Մատենադարան, ձեռ. № 582, Թ. 32 ր։

ФИЛОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ
О СОЧИНЕНИИ МХИТАРА АЙРИВАНЕЦИ
«ХРОНОГРАФИЧЕСКАЯ ИСТОРИЯ»

ЭЛЕОНОРА АРУТЮНЯН

Резюме

«Хронографическая история» М. Айриванеци является важным первоисточником для изучения древней и средневековой истории Армении. Еще с середины XIX в. стали проводить филологические изыскания по уточнению первоисточников этого произведения, времени его создания и пр.. Особой темой исследований стал вопрос о времени завершения этой хронологии, поскольку изложение событий в ней кончается упоминанием 1289 г., в то время как в списках, нашедших место в первой части текста, отмечены деятели начала XIV в.

Сопоставление новых фактов показывает, что «Хронографическая история» была закончена в 1289 г., а данные, касающиеся более позднего времени, являются дальнейшими добавлениями. Имеющиеся в произведении календарные таблицы также являются поздними дополнениями, представляющими собой отдельные части другого труда М. Айриванеци («Теория календаря»), написанного в 1297-1300 гг.

К числу добавлений к тексту принадлежит также содержащийся в рукописях № 582 и № 1723 небольшой отрывок, относящийся к теории календаря, следующий после заключительной части и замеченный переписчиками и издателями XIX в.